

## **2.7. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

### **2.7.1. Սոցիալական ոլորտ**

Վարչական ռեգիստրների ներդրման և շարունակական կատարելագործման նկատառումներով պայմանավորված, համապատասխան վարչական վիճակագրություն իրականացնող պետական կառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում ներդրվել են մի շարք վարչական վիճակագրական հաշվետվական ձևեր:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում ներդրված վարչական վիճակագրական հաշվետվական ձևերը վերանայվել են, ներառված ցուցանիշների կազմում կատարվել են համապատասխան փոփոխություններ, մասնավորապես 2011 թվականին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հավանության են արժանացել թվով 2 վարչական վիճակագրական հաշվետվական ձևեր:

ՀՀ առողջապահության նախարարության համակարգում ներդրված վարչական վիճակագրական հաշվետվական ձևերը վերանայվել են, ներառված ցուցանիշների կազմում կատարվել են համապատասխան փոփոխություններ, ավելացվել են նոր ցուցանիշներ, որոնք հնարավորություն կընձեռեն առողջապահության ոլորտի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հավաքագրմանը, մասնավորապես 2012 թվականին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հավանության են արժանացել թվով 9 վարչական վիճակագրական հաշվետվական ձևեր և լրացման հրահանգներ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության համակարգում նախադպրոցական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն կրթության և գիտատեխնիկական աշխատանքների վարչական ռեգիստրների ձևավորման և վարչական վիճակագրության ներդրման ուղղությամբ 2010-2012 թթ.-ի ընթացքում շարունակվել են աշխատանքները: 12-ամյա կրթակարգի անցմամբ պայմանավորված և վիճակագրական հաշվառման ամբողջականացման նպատակով վերանայվել և կատարելագործվել է հանրակրթության վարչական ռեգիստրը, 2012 թվականին ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հավանության է արժանացել 1-հանրակրթություն վարչական վիճակագրական հաշվետվական ձևը և լրացման հրահանգը:

Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգում վարչական ռեգիստրի ձևավորման և վարչական վիճակագրության ներդրման ուղղությամբ:

Բնակարանային ֆոնդի և կոմունալ տնտեսության ոլորտի վիճակագրության բարելավման նպատակով վերանայվել է վիճակագրական հաշվառման գործընթացը:

Սպառողների պահանջների ամբողջական բավարարման, տեղեկատվության մատչելիության բարձրացման նպատակով տարեկան պարբերականությամբ հրապարակել են.

- «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» վիճակագրական ժողովածու, որտեղ ներառվել են կրթության, գիտության, առողջապահության, արտադրությունում դժբախտ պատահարների, սոցիալական ապահովության, մշակույթի, արխիվային գործի, նոտարական գործունեության, արտոնագրման, ստանդարտացման, սերտիֆիկացման և հավատարմագրման, իրավական ոլորտի վերաբերյալ ընթացիկ տարվա քանակական բնութագրիչները, ինչպես նաև որոշ ցուցանիշների նախորդ տարիների դինամիկ շարքեր,

- «Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը» վիճակագրական ժողովածու, որտեղ ներառված են բնակարանային ֆոնդի, անշարժ գույքի շուկայի, համայնքների ջրամատակարարման, կոյուղացման, գազաֆիկացման, քաղաքային բնակավայրերի սանիտարական մաքրման, քաղաքային հողերի և կանաչապատ տարածքների վերաբերյալ ընթացիկ տարվա քանակական բնութագրիչները, ինչպես նաև որոշ ցուցանիշների նախորդ տարիների դինամիկ շարքեր:

### **2.7.2. Բնապահպանություն**

Իրականացվել են աշխատանքներ ՀՀ սոցիալ-տնտեսական և տարածաշրջանների զարգացման ու կենսագործունեության առանձնահատկություններով պայմանավորված բնապահպանության ոլորտին առնչվող մարզային տեղեկատվական բազաների ձևավորման և համապատասխան վարչական ռեգիստրների ամբողջականացման ուղղությամբ: Մասնավորապես, մշակվել են և ներդրման փուլում են անտառների, որսորդական տնտեսությունների գործունեության, արգելոցների, ազգային պարկերի և արգելոցների մասին, ընդերքօգտագործման վերաբերյալ վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերը:

Շարունակվել են աշխատանքները ՀՀ բնապահպանության նախարարության համակարգում ջերմոցային գազերի կադաստրի վիճակագրական տեղեկատվությամբ ապահովման ուղղությամբ մեթոդաբանական օժանդակությունը:

Շարունակվել են բնապահպանական սատելիտային հաշիվների ձևավորման համար բնական կապիտալի ցուցանիշների հաշվառման, բնապահպանական ծախսերի հաշվառման համապատասխան հաշվետվությունների ձևերի մշակման աշխատանքները:

Շարունակվել են բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների բացասական ազդեցության գնահատման ցուցանիշների սահմանման և համապատասխան վարչական տեղեկատվական ռեգիստրների կատարելագործման աշխատանքները:

Շարունակվել են աշխատանքները վիճակագրական հրապարակումներում աշխարհագրական տեղեկատվական համակարգի ներդրման ուղղությամբ:

Շարունակվում են աշխատանքները կայուն զարգացման գնահատման, «կանաչ էկոնոմիկայի» բնութագրիչ վիճակագրական ցուցանիշների սահմանման, դրանց հաշվառման համապատասխան գործիքների ու մեթոդաբանական մշակումների ուղղությամբ:

Սպառողների պահանջների ամբողջական բավարարման, տեղեկատվության մատչելիության բարձրացման նպատակով բաժինը տարեկան պարբերականությամբ հրապարակել է «Բնական պաշարները և շրջակա միջավայրը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուն, որը ներառել է տեղեկատվություն հիդրոոդերևութաբանական պայմանների, անտառային տնտեսության և բնության հատուկ պահպանվող տարածքների, երկրաբանահետախուզական աշխատանքների, պահպանության կարիք ունեցող հողերի, մթնոլորտային արտանետումների, ջրօգտագործման և ջրհեռացման, թափոնների շարժի, բնապահպանական և բնօգտագործման վճարների, բնապահպանական ընթացիկ ծախսերի և հիմնական միջոցների, շրջակա միջավայրի մշտադիտարկման, բնապահպանական իրավախախտումների, արտակարգ իրավիճակների վերաբերյալ ընթացիկ տարվա քանակական բնութագրիչները, ինչպես նաև որոշ ցուցանիշների նախորդ տարիների դինամիկ շարքեր:

### **2.7.3. Տնային տնտեսությունների հետազոտություններ**

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունները՝ կիրառելով աղքատության մակարդակի գնահատման վերանայված մեթոդաբանություն: Ի մասնավորի, պարբերաբար անց են կացվել տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություններ, կիրառելով աղքատության մակարդակի գնահատման առավել ճշգրտված մեթոդաբանություն: 2010-2011 թվականների տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտություններն (ՏՏԿԱՀ) իրականացվել են ՀՀ պետական բյուջեի և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՄՀ-Հայաստան) համաֆինանսավորմամբ, իսկ 2012 թվականին՝ միայն ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Բնակչության աղքատությունը և կենսամակարդակը (կենսապայմանները) բնութագրող հիմնական ցուցանիշների ամբողջականացման և արդիականացման նպատակով ապահովվել է տնային տնտեսությունների հետազոտությունների ընտրանքի ներկայացուցչականությունը, որն էլ հնարավորություն է ընձեռել այդ ցուցանիշները հաշվարկել և հրապարակել մարզային կտրվածքով: 2010-2011 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություններն իրականացվել են ավելի մեծ

ընտրանքով (տարեկան 7872 տնային տնտեսություն), իսկ 2012 թվականին՝ ավելի փոքր ընտրանքով (տարեկան 5184 տնային տնտեսություն),

Հետազոտության հարցաթերթի համապատասխան հարցերի վերանայման և փոփոխման միջոցով շարունակաբար կատարելագործվել է աղքատության ոչ նյութական ցուցանիշների (կրթություն, առողջապահություն, անվտանգ խմելու ջրի մատչելիություն, բնակարանային պայմաններ և այլն) մշտադիտարկումը:

#### **2.7.4. Պարենային ապահովություն**

Պարենային ապահովության վիճակագրության վարումն իրականացվել է 2010-2012 թվականների եռամյա ծրագրով, ինչպես նաև 2003 և 2005 թվականներին ՀՀ Կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև ստորագրված «Պարենային ապահովության ծրագրի» Փոխըմբռման հուշագրով սահմանված նախապայմաններով:

Հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են պարենային ապահովության վիճակագրությանն առնչվող մակրոտնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ոլորտների, աշխատանքի վիճակագրության, երեխաների խնամքի և պաշտպանության միջոցառումների, գների և գների ինդեքսների, գյուղատնտեսության, գյուղատնտեսական հողերի բարելավման, գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների, բույսերի կարանտինի և պաշտպանության միջոցառումների, ագրոօդերևութաբանական տեղեկատվության, պարենամթերքի արտաքին առևտրի, անտառապահպանության, անտառապաշտպանության և անտառվերականգման միջոցառումների և տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների, աղքատության վերաբերյալ ցուցանիշները, որոնք եռամսյակային պարբերականությամբ հրապարակվել են «Պարենային ապահովություն և աղքատություն» վիճակագրական տեղեկագրում:

Հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշները՝ կազմվել են 2010-2012 թվականների առանձին ապրանքախմբերի ազգային պարենային հաշվեկշիռները:

Եվրոպական հանձնաժողովի ու Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ԵՀ/ՊԳԿ) «Պարենային ապահովության տեղեկատվական համակարգի հիման վրա կայացվող որոշումների բարելավում» ծրագրի շրջանակներում նշված կազմակերպությունների ներկայացուցիչների և փորձագետների հետ կազմակերպվել են փոխադարձ այցելություններ և աշխատանքային քննարկումներ, որոնց արդյունքում սահմանվել են ծրագրի առաջնայնության չորս ոլորտները և տվյալ ոլորտներում իրականացվող միջոցառումները, որոնց մեջ ներառվել են պարենային ապահովության և աղքատության տեղեկագրի, ինչպես նաև պարենային հաշվեկշռի կատարելագործումը: Իրականացվել են «Պարենային ապահովություն և աղքատություն» վիճակագրական տեղեկագրի, մատակարարում-սպառում հաշիվների և

պարենային հաշվեկշիռների կազման մեթոդաբանության կատարելագործման աշխատանքներ: Մասնավորապես՝

1. «Պարենային ապահովություն և աղքատություն» վիճակագրական տեղեկագրում՝

- «Գներ և գների ինդեքսներ» բաժնի որոշ աղյուսակներում ավելացել է «լուրիկ» ցուցանիշը,
- «Պարենի առկայության» բաժնում ավելացվել է «թռչունների (որից՝ ածան հավերի) գլխաքանակը հունվարի 1-ի դրությամբ» խորագրով աղյուսակ, ինչպես նաև առկա որոշ աղյուսակներում ավելացվել են նոր ցուցանիշներ,
- իրականացվել են մեթոդաբանական պարզաբանումների ճշգրտումներ և լրացումներ:

2. ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներ են կազմվել 21 ապրանքախմբերի համար՝ նախկին 14 ապրանքախմբի փոխարեն,

3. ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռների որոշ ապրանքախմբերում ավելացվել են նոր ապրանքատեսակներ, օրինակ, «կաթ» ապրանքախմբում ավելացվել են կարագ և պաղպաղակ ապրանքատեսակները և այլն,

4. ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներում վերանայվել են վերամշակված ապրանքներից տվյալ ապրանքի վերածման որոշ գործակիցներ:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» խորագրով ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում՝ Եվրոպական վիճակագրական համակարգի որակի հոշակագրի պահանջներին համապատասխան, պատրաստվել է «Պարենային հաշվեկշիռ (տարեկան)» Որակի հոշակագիրը (զետեղված է Ծառայության պաշտոնական կայքէջում, «Փաստաթղթավորում» բաժնում:

## 2.7.5. Ժողովրդագրություն

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են հանրապետության գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառման աշխատանքները՝ համապատասխան պետական վիճակագրական հաշվետվության ձևի միջոցով: 2010, 2011 և 2012 թվականների հունվարի 1-ի դրությամբ հանրապետության գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառման արդյունքներով՝ ըստ Ձև թիվ 9-Ս պետական վիճակագրական հաշվետվությունների, ստացվել են տվյալներ բոլոր 866 գյուղական համայնքներից: Դրանցում ամփոփվել են համայնքներում տնային տնտեսությունների քանակի, մշտական բնակչության թվաքանակի, առկա բնակչության առանձին տարիքների և տարիքային խմբերի, տնային տնտեսությունների զբաղված անդամներից՝ գյուղատնտեսական և այլ ոլորտներում զբաղվածների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները: Ծառայության մարզային գործակալությունների կողմից ներկայացվել են նաև ամփոփ տեղեկագրեր, որոնցում

ամփոփված են բոլոր գյուղական բնակավայրերի հիմնական ցուցանիշներն ըստ տարածաշրջանների: Ձև թիվ 9-Ս պետական վիճակագրական հաշվետվության ծրագրային մշակման արդյունքում 2010, 2011 և 2012 թվականներին ստացվել են գյուղական առկա և մշտական բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի, տնային տնտեսությունների քանակի և ՀՀ մարզերի ու տարածաշրջանների զբաղված բնակչության թվաքանակների բաշխումը բնութագրող ելքային աղյուսակներ (թվով՝ 6 աղյուսակներ):

Ամսական պարբերականությամբ ՀՀ արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) տարածքային բաժիններից ստացված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության ակտերի մշակման արդյունքում ստացվել են ամենամյա օպերատիվ տվյալներ՝ ՀՀ մարզերի և տարածաշրջանների քաղաքային և գյուղական բաշխումով, որոնց հիման վրա ամփոփվել են բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ տարեկան վիճակագրական ցուցանիշները: Իսկ մեքենայական մշակման արդյունքում, տարեկան պարբերականությամբ, ստացվել են 22 ելքային աղյուսակներ:

2010 և 2011 թվականներին ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժիններից ստացված ձև թիվ 19՝ «Եկողի հասցեաթերթիկների» և ձև թիվ 20՝ «Մեկնողի հասցեաթերթիկների» մշակման արդյունքում ստացվել են միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ եռամսյակային օպերատիվ տվյալներ, իսկ մեքենայական մշակման արդյունքում՝ տարեկան ելքային (թվով 12) աղյուսակներ:

2012 թվականին ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի «ՀՀ ազգային վիճակագրությանը բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու մասին թիվ 1333-Ն որոշման համաձայն, «եկողների» և «մեկնողների» տվյալների վերաբերյալ կտրոններում պարունակվող 2012 թվականի վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է էլեկտրոնային բազաներով, եռամսյակային պարբերականությամբ: Դրանով պայմանավորված, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության հետ համատեղ ծրագրային լրամշակումներ են կատարվել վերոնշյալ էլեկտրոնային բազայով ստացված միգրացիոն տեղաշարժերի ելքային տվյալների ստացման ձևաչափերի մշակման աշխատանքներում:

Բնական շարժի ամսական և մեխանիկական շարժը բնութագրող եռամսյակային օպերատիվ ցուցանիշների հիման վրա, 2010-2012 թվականների համար՝ տարեկան և եռամսյակային պարբերականությամբ, արդիականացվել են ՀՀ 2001 թվականի մարդահամարի հիմքով վարվող հանրապետության մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշները՝ քաղաքային և գյուղական կտրվածքով, և թողարկվել են «ՀՀ մշտական բնակչության թվաքանակը» վիճակագրական տեղեկագրերը:

ՀՀ 2001 թվականի մարդահամարի հիմքով՝ բնական շարժի և միգրացիայի ընթացիկ հաշվառման արդյունքներով, իրականացվել է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի մշտական բնակչության սեռատարիքային կազմի հաշվարկը՝ քաղաքային և գյուղական կտրվածքով:

« 2011 թվականի մարդահամարի տվյալների մշակման և ելքային աղյուսակների ստացման աշխատանքների կազմակերպման շրջանակում համակարգվել է մարդահամարի վարչության կողմից պատրաստվող մեթոդաբանական փաստաթղթերի մշակման գործառույթը:

ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, Եվրոստատի և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների հայցերով պատրաստվել և ներկայացվել է տեղեկատվություն՝ բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի, ծնելիության, մահացության և դրա պատճառների, ամուսնության և ամուսնալուծության, կյանքի սպասվող տևողության մասին (երկմաս), ինչպես նաև միգրացիոն տեղաշարժերի՝ եկողների և մեկնողների սեռատարիքային կազմի, կրթական մակարդակի, միգրացիայի ուղղությունների վերաբերյալ:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության» խորագրով ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում պատրաստվել են՝ ժողովրդագրական վիճակագրության (ժողովրդագրական իրավիճակի՝ ծնունդների, մահվան դեպքերի, ամուսնությունների և ամուսնալուծությունների վերաբերյալ տվյալների)՝ տարեկան և եռամսյակային, երկարաժամկետ միգրացիայի՝ տարեկան և եռամսյակային, բնակչության թվաքանակի՝ տարեկան և եռամսյակային, կյանքի սպասվող տևողության՝ տարեկան, ինչպես նաև նորածիններին ավելի հաճախ տրվող անունների՝ կիսամյակային և տարեկան, թվով 9 Որակի հռչակագրերը (զետեղված են Ծառայության պաշտոնական կայքէջում, «Փաստաթղթավորում» բաժնում):

Տարեկան պարբերականությամբ հրապարակվել է «Ժողովրդագրական ժողովածու» վիճակագրական ժողովածուն, որը ներառում է բնակչության թվաքանակի, բնական շարժի, ամուսնությունների ու ամուսնալուծությունների և ժողովրդագրական այլ ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը (այդ թվում՝ դինամիկ շարքերի տեսքով):

### **2.7.5.1.Մարդահամար**

Մարդահամարի նախապատրաստման, կազմակերպման և անցկացման, ինչպես նաև մարդահամարի նյութերի մշակման աշխատանքներն իրականացվել են, ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի դրույթներով, ՀՀ կառավարության որոշումներով, պետական վիճակագրական աշխատանքների եռամյա և տարեկան ծրագրերով, Խորհրդի կողմից հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման, նյութերի մշակման և հրապարակման աշխատանքների ժամանակացույցով», Խորհրդի այլ որոշումներով և Ծառայության նախագահի հրամաններով:

## 1. 2010 թվականին՝

«Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի որոշմամբ, 2010 թվականի հոկտեմբերի 21-30-ը ներառյալ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում և ՀՀ Տավուշի մարզի Գանձաքարի, Գետահովիտի, Խաշթառակի և Աջաջուրի գյուղական համայնքներում անցկացվեց փորձնական մարդահամար, որի նպատակն էր փորձարկել մարդահամարի մեթոդաբանական, կազմակերպական սկզբունքները, նյութերի մեքենայական մշակման ծրագրերն ու տեխնոլոգիան:

ՀՀ 2010 թվականի փորձնական մարդահամարի նախապատրաստման աշխատանքներն իրականացվեցին «ՀՀ 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման, նյութերի մեքենայական մշակման և հրապարակման աշխատանքների ժամանակացույցի» համաձայն:

Փորձնական մարդահամարի կազմակերպական աշխատանքների առաջին փուլով կազմակերպվեցին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում տների/շինությունների ցուցակների կազմման և ՀՀ Տավուշի մարզի վերոնշյալ գյուղական համայնքներում՝ բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների կազմման աշխատանքները, այնուհետև դրանց հիման վրա կազմակերպվեցին նշված տարածքների կազմակերպական պլանները, որոնց հիման վրա տարածքները բաժանվեցին հաշվային, հրահանգչական և մարդահամարի տեղամասերի: ՀՀ 2010 թվականի փորձնական մարդահամարի կազմակերպման, անցկացման և արդյունքների մշակման ընթացքում ներգրավվեցին թվով 174 ժամանակավոր աշխատակիցներ, որոնց վարձատրությունն իրականացվեց ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից:

Բնակչության շրջանում փորձնական մարդահամարի անցկացման նպատակների, խնդիրների, անցկացման կարգի և ժամկետների մասին պահանջվող իրազեկման աշխատանքների շրջանակում տպագրվել են բուկլետներ, պաստառներ, պատրաստվել է տեսահոլովակ, երկու հաղորդաշար՝ 3 րոպե և 20 րոպե տևողությամբ, որոնք պարբերաբար եթեր են հեռարձակվել Հանրային 2-րդ հեռուստաընկերությամբ, Սևանի և Իջևանի տեղական հեռուստաընկերություններով:

2010 թվականի հոկտեմբերի 21-30-ը ներառյալ ընտրված տարածքներում իրականացվեց փորձնական մարդահամար՝ բնակչության հաշվեգրման և հարցաթերթի լրացման եղանակով: Մարդահամարի լրացված հարցաթերթերը վիճակագրական նպատակով մշակման ենթարկվեցին Ծառայության մարդահամարի վարչությունում: Կատարվեցին մարդահամարի հարցաթերթի որոշ հարցերի թվային ծածկագրման, այնուհետև տվյալների մեքենայական մշակման աշխատանքները: Հարցաթերթի վիճակագրական մշակումն իրականացվեց տվյալների ձեռքով մուտքագրման և տվյալների սկաներային մշակման եղանակներով, որը նպատակ ունի համեմատել տվյալների մշակման երկու եղանակների հնարավոր արդյունավետությունը:



## 2. 2011 թվականին՝

Ծառայության ներկայացմամբ և Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի հավանությամբ, ՀՀ կառավարության կողմից ընդունվել է որոշում՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի ծրագիրը (հարցաշարը) հաստատելու մասին (2011 թվականի մայիսի 12-ի, թիվ 674-Ն որոշում)<sup>1</sup>:

2011 թվականի ընթացքում ՀՀ 2011 թվականի մարդահամարի աշխատանքներին աջակցելու համար իրենց պատրաստակամությունը հայտնաձ Դոնոր կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, Նորվեգիայի կառավարություն, Իտալիայի կառավարություն, Հնդկաստանի կառավարություն, Զարգացման և համագործակցության Շվեյցարական ծառայություն, Միավորված Ազգերի Փախստականների գծով Գերագույն Հանձնակատարի Հայաստանյան Գրասենյակ) հետ իրականացվել են ֆինանսական միջոցների տրամադրման ժամանակացույցերի և առաջնահերթություններին առնչվող գործառույթներ, որոնց ընթացքի վերաբերյալ պարբերաբար ներկայացվել են ֆինանսական հաշվետվություններ:

Փետրվարի 18-ին, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ, տեղի է ունեցել միջազգային դոնոր կազմակերպությունների հավաք, որի ընթացքում Ծառայության կողմից ներկայացվել է 2010 թվականի հոկտեմբերի 21-30-ն անցկացված փորձնական մարդահամարի անցկացման ընթացքը, առաջացած հիմնախնդիրները և քննարկվել է միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարին աջակցելու հարցը:

Նախապատրաստվել և հրավիրվել են ՀՀ 2011 թվականի մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի նիստեր: Մասնավորապես.

Ապրիլի 29-ի նիստի ընթացքում՝

ա) Ծառայության կողմից տեղեկատվություն է հաղորդվել ՀՀ 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների ընթացքի վերաբերյալ,

բ) քննարկվել և համապետական հանձնաժողովի կողմից հավանութան է արժանացել Ծառայության կողմից ներկայացված ՀՀ 2011 թվականի մարդահամարի ծրագրի (հարցաշարի) նախագիծը:

Սեպտեմբերի 2-ի նիստի ընթացքում Ծառայության կողմից ներկայացվել է մարդահամարի նախապատրաստման աշխատանքների ընթացքն՝ ամփոփված սեպտեմբերի 1-ի դրությամբ:

---

<sup>1</sup> Հրապարակված է Պաշտոնական տեղեկագիր՝ թիվ 34 (837), 08.06.2011թ.

Հոկտեմբերի 3-ի նիստի ընթացում՝ Ծառայության կողմից ներկայացվել է ՀՀ 2011 թվականի հոկտեմբերի 12-21-ն անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման վիճակը ՀՀ մարզերում և Երևան քաղաքում:

Փորձնական մարդահամարի արդյունքների հիման վրա կատարված լրամշակումներից հետո, 2011 թվականի Խորհրդի որոշումներով հաստատվել են մարդահամարի նախապատրաստման, կազմակերպման և անցկացման գործընթացները կանոնակարգող թվով 66 փաստաթղթեր՝ ձևաթղթեր, ցուցումներ, հրահանգներ, հարցաթերթեր, հուշատետրեր, մեթոդաբանական դրույթներ, որոնցից 10-ը գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

Հուլիսի 31-ի դրությամբ ավարտվել են ՀՀ գյուղական համայնքների (մինչև 5000 բնակչություն ունեցող թվով՝ 829) ղեկավարների աշխատակազմերի կողմից գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանցում տնային տնտեսությունների ցուցակների կազմման աշխատանքները և տրամադրվել Ծառայության մարզային (տարածքային) գործակալություններին (բաժիններին): Հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում, 3 փուլերով իրականացվել են ՀՀ քաղաքների (թվով՝ 48, այդ թվում՝ Երևանի վարչական շրջանների՝ 12) և խոշոր գյուղական համայնքների (5000 և ավելի բնակչություն ունեցող թվով՝ 37) տների (շինությունների) ցուցակների կազմման աշխատանքները՝ թվով 660 հրահանգավորված ցուցակագրողների կողմից:

ՀՀ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կողմից լրացվել և Ծառայությանն են տրամադրվել ՁԵՎ ԹԻՎ 1-ԲՆԱԿԲՆՈՒԹԱԳԻՐ «Բազմաբնակարան շենքի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ» պետական վիճակագրական դիտարկման լրացված հարցաթերթերի տարբերակները:

ՀՀ քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) ցուցակների կազմման աշխատանքների ավարտից հետո, կազմվել է տեղեկանք՝ ՀՀ քաղաքներում սահմանների ճշգրտման, փողոցների անվանումների, թաղամասերի և տների համարակալման կարգավորման, համարանիշերի և անվանացույցերի տեղադրման գործընթացում առկա թերությունների վերաբերյալ և ներկայացվել ՀՀ 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական և մարզային հանձնաժողովների նիստերի ժամանակ:

Օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ 10 մարզերում և Երևան քաղաքում անց են կացվել ՀՀ 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների նիստեր՝ համայնքների և Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ներկայությամբ, որոնց մասնակցել են Ծառայության նախագահը և Ծառայության աշխատանքային խումբը:

Նիստերի ընթացքում ներկայացվել է մարդահամարի կարևորությունը, քննարկվել մարզային հանձնաժողովների և համայնքապետերի կողմից ցուցաբերվելիք օժանդակության և մարդահամարի նախապատրաստման աշխատանքների ընթացքի մասին հարցերը:

Տների (շինությունների) և գյուղական համայնքներում բնակավայրերի ու դրանցում տնային տնտեսությունների ցուցակների հիման վրա կազմվել են ՀՀ 2011 թվականի մարդահամարի մարզային (տարածքային) և հանրապետական կազմակերպական պլանները, որով հաստատվել են մարդահամարի անցկացման համար հաշվային, հրահանգչական և մարդահամարի տեղամասերի կազմն ու կառուցվածքը, դրանց աշխատակազմի տեղակայման համար անհրաժեշտ տարածքների թիվը:

Հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում Ծառայության կողմից հաստատվել են ՀՀ 2011 թվականի մարդահամարի անցկացման մարզային ամփոփ և դրանց տարածքային կազմակերպական պլանները:

Համաձայն ՀՀ 2011 թվականի ամփոփ կազմակերպական պլանի, ՀՀ ողջ տարածքում հաստատվել են 182 մարդահամարի, 2243 հրահանգչական և 11548 հիմնական հաշվային տեղամասեր:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի թիվ 301-Ն որոշման 7-րդ կետով սահմանված հանձնարարականի՝

ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ քննարկվել և պատրաստվել է Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին մարդահամարի անցկացման ժամանակ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ծառայող ՀՀ դիվանագետների և նրանց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների հաշվառման հետ կապված կարգը սահմանող համապատասխան իրավական փաստաթուղթը, որը հաստատվել է համապատասխան գերատեսչության ղեկավարի և Ծառայության նախագահի համատեղ հրամանով, որը գրանցվել է նաև ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

ՀՀ պաշտպանության և ՀՀ արդարադատության նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության հետ քննարկվել և պատրաստվել է Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին մարդահամարի անցկացման ժամանակ բնակչության առանձին խմբերի (զինծառայողներ, ձերբակալվածներին պահելու վայրերում և քննչական մեկուսարաններում գտնվող, քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող անձինք) հաշվառման կարգը սահմանող համապատասխան իրավական փաստաթուղթը, որը հաստատվել է համապատասխան գերատեսչությունների ղեկավարների և Ծառայության նախագահի համատեղ հրամանով (գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից):

Նախատեսված գրաֆիկով իրականացվել են մարդահամարի փաստաթղթերի և մարդահամարը լուսաբանող զանգվածային նյութերի տպագրումն ու առաքումը մարզեր:

Մասնավորապես՝

Երևան քաղաքում և հանրապետության խոշոր մայրուղիներում սեպտեմբերի 16-ից տեղադրվել են յուրաքանչյուրը 18 քառ.մ մակերեսով՝ թվով 20 գովազդային վահանակներ:

Տպագրվել և բաշխվել են ՀՀ 2011 թվականի մարդահամարը լուսաբանող 19600 պաստառներ, ինչպես նաև բրոշյուրներ:

Նկարահանվել է գովազդային տեսահոլովակ մուլտֆիլմի ձևաչափով, որը հոկտեմբերի 1-ից հեռարձակվել է Հանրային (օրը 1 անգամ), Հ2 (օրը միջինում 6 անգամ) և Արմենիա (օրը 1 անգամ) հեռուստաալիքներով մինչև հոկտեմբերի 18-ը:

Նկարահանվել է հաղորդման ձևաչափով իրազեկման հոլովակ, որը ցուցադրվել է Հ2 հեռուստաալիքով (2 անգամ):

ԱՄՆ Հաշվառումների բյուրոյի փորձագետների աջակցությամբ պատրաստվել և տպագրվել են դպրոցական ուղեցույցեր և ՀՀ կրթության և գիտության նախարարի հետ ձեռք բերված հանաձայնությամբ հոկտեմբերի առաջին տասնօրյակում իրականացվել են ՀՀ 2011 թվականի մարդահամարի իրազեկման դասընթացներ՝ խաղերի և հանդեսների ձևաչափով, 4-րդ և բարձր դասարանների աշակերտների շրջանում:

ՀՀ փոխվարչապետի աջակցությամբ (գրություններով) դիմվել է ՀՀ բջջային 3 խոշոր օպերատորներին՝ մարդահամարից առաջ և ընթացքում, ԱՄՆ Հաշվառումների բյուրոյի փորձագետների կողմից կազմված տեքստերով, հաղորդագրություններ ուղարկելու բջջային բոլոր բաժանորդներին:

Օգոստոս-սեպտեմբեր ժամանակաընթացքում իրականացվել է մարդահամարի ժամանակավոր աշխատողների հավաքագրումն ու նրանց հետ աշխատանքային պայմանագրերի կնքումը.

- Ծառայության աշխատակազմի մարզային և Երևան քաղաքի գործակալություններում մարդահամարի աշխատանքները համակարգողներ՝ 61 մարդ,

- Մարդահամարի տեղամասի վարիչներ և նրանց օգնականներ՝ 364 մարդ,

- Հրահանգիչ-հսկիչներ՝ 2425 մարդ,

- Հաշվարարներ՝ 12124 մարդ:

Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 20 խմբերով կատարվել են Ծառայության մարզային գործակալությունների և դրանց տարածքային բաժինների պատասխանատու անձանց և մարդահամարի աշխատանքները մարզերում համակարգողների, մարդահամարի

տեղամասերի վարիչների և նրանց օգնականների հրահանգավորումներ՝ ՀՀ 2011 թվականի մարդահամարի հարցաթերթը լրացնելու (մարդահամարն անցկացնելու) կարգի մասին հրահանգի և մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի, հրահանգիչ-հսկիչի և հաշվարարի պարտականություններին առընչվող մնացած բոլոր փաստաթղթերի ուսուցում:

Հոկտեմբերի 8-10-ն ընկած ժամանակաընթացքում հաշվարարների կողմից տների/շենքերի նախնական շրջագայության, հոկտեմբերի 12-21-ը ՀՀ մարդահամարի տվյալների հավաքագրման (անցկացման) և հոկտեմբերի 22-26-ը հետմարդահամարային վերահսկիչ շրջագայության ընթացքում օգնության կարգով Ծառայության աշխատակազմի մարդահամարի վարչության աշխատակիցները գործուղվել են ՀՀ մարզեր և տարածքներ:

Ծառայության աշխատակազմի մարզային (Երևան քաղաքի) գործակալություններից մարդահամարի նյութերի ստուգման և ընդունման նպատակով Ծառայության նախագահի հրամանով ստեղծվել են մարդահամարի նյութերն ընդունող 4 հանձնաժողովներ և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվել է մարդահամարի նյութերի որակական ընդունումն աշխատակազմի մարզային (Երևան քաղաքի) գործակալությունների տարածքային բաժիններից:

2011 թվականի նոյեմբերի 25-30-ն իրականացվել է ծածկագրողների ընտրություն, նրանց հրահանգավորում ու գիտելիքների ստուգում և նրանց հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր:

2011 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվել են մարդահամարի հսկիչ թերթերի և վերահսկիչ փաստաթղթերի ստուգման և վարման աշխատանքներ:

Մինչև 2011 թվականի դեկտեմբերի 30-ն իրականացվել է մարդահամարի նյութերի (պայուսակներում տեղադրված հարցաթերթեր, ուղեկցող թերթեր և ամփոփագրեր) Ծառայության աշխատակազմի մարզային (Երևան քաղաքի) գործակալություններից Ծառայության աշխատակազմի մարդահամարի վարչություն տեղափոխումը, դրանց քանակական ընդունումը, ուղեկցող թերթերի ծածկագրումն ու մուտքագրումը:

2011 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2012թ. մայիսի 31-ը երկհերթ աշխատանքային գրաֆիկով իրականացվել են մարդահամարի հարցաթերթերում առկա բառային բովանդակություն ունեցող պատասխանների ծածկագրման աշխատանքները:

### **3. 2012 թվականին՝**

2012 թվականի փետրվարի 7-ին հրապարակվել են ՀՀ 2011 թվականի մարդահամարի ընթացքում հաշվեգրված բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկությունները՝ 11 548 հաշվային տեղամասերի, 2 243 հրահանգչական տեղամասերի, 182 մարդահամարի տեղամասերի, իսկ վերջիններիս հիման վրա Ծառայության առանձնացված

ստորաբաժանումների կողմից կազմված ամփոփ տեղեկագրերով մարդահամարի ընթացքում հաշվեգրված բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկությունների, ինչպես նաև ՀՀ արտաքին գործերի, ՀՀ արդարադատության, ՀՀ պաշտպանության նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հատուկ կարգով հաշվառված անձանց վերաբերյալ ամփոփ տվյալների հիման վրա:

2012թ. փետրվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը, երկհերթ աշխատանքային գրաֆիկով, իրականացվել են մարդահամարի հարցաթերթերի տվյալների մուտքագրման աշխատանքները: Տվյալների ճշգրտությունն ապահովելու համար հարցաթերթերի 75%-ն ենթարկվել է կրկնակի մուտքագրման:

Մուտքագրման աշխատանքների ավարտից հետո մեքենայական ծրագրերի միջոցով մարդահամարի տեղեկատվական բազայում իրականացվել են.

- կրկնակի գրանցումների վերացում,
- մուտքագրված տվյալների և ուղեկցող թերթերի տվյալների համապատասխանության ստուգում,
- անհամապատասխանությունների վերացում՝ հարցաթերթերի տվյալների հետ համեմատելու եղանակով:

Փորձարկվել է տվյալների տրամաբանական հսկման և ավտոմատ ուղղման ծրագրի առաջին մասը:

Ղեկավարվելով ՄԱԿ-ի Մարդահամարներ և կացարանների հաշվառում անցկացնելու սկզբունքներով և ուղեցույցներով, հաշվի առնելով նախորդ մարդահամարների ելքային աղյուսակների կառուցվածքը, մշակվել և Խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 31-Ա որոշմամբ հաստատվել է ՀՀ 2011 թվականի մարդահամարի արդյունքների ստացման և հրապարակման նպատակով մշակված ՀՀ 2011 թվականի մարդահամարի ելքային աղյուսակների ցանկը:

Մարդահամարի դաշտային աշխատանքների ավարտից հետո, նախնական մեքենայական մշակման (կառուցվածքային և տրամաբանական հսկման) ենթարկված անհատական տվյալների տեղեկատվական բազայի հիման վրա ստացվել են ՀՀ առկա և մշտական բնակչության նախնական ցուցանիշները, որոնց մասին տեղեկատվությունը հրապարակվել է «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար-սեպտեմբերին» տեղեկատվական ամսական զեկույցում, ինչպես նաև որպես մամուլի հաղորդագրություն, զետեղվել է Ծառայության պաշտոնական կայքէջում:

Ելքային աղյուսակների ստացումն ապահովելու նպատակով, 2012 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին CSPro ծրագրային փաթեթի միջոցով մշակվել են մեքենայական ծրագրեր, որից հետո 2012 թվականի դեկտեմբերին ստացվել և վերջնական տեսքի են բերվել ելքային աղյուսակների ցանկից թվով 10 աղյուսակներ: